ՍՅՈՒՆԻՔԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԳԱՆՁԸ

Պատմ. գիտ. դոկտոր Խ. Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ

Հայաստանի պատմության թանգարանում պահվող գանձերի շարքում մի գանձ ևս ավելացավ։ Այն գտնվել է պատահականորեն, Հայկական ԽՍՀ Սիսիան քաղաքի Սյունիք կոչվող ներկայիս թաղամասում, 1986 թ. ապրիլի երկրորդ կեսին։ Իր տնամերձի շինարարական աշխատանքների ժամանակ Հովհաննես Ղազարյանը նկատել է հողից դուրս եկած դրամները և դիմել է տեղական իշխանություններին, մասնավորապես Հայկական ԽՍՀ ներքին գործերի մինիստրության աշխատակիցներին, որոնք օգնել են կորստից փրկելու դրամները և հանձնել են դրանք թանգարանին։ Այնուհետև Հայկական ԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակից Հ. Մխիթարյանը պնդել է գանձի հայտնաբերման վայրը և գտել ևս 21 արծաթե դրամներ, որոնք նույնպես տրվել են մասնագետի՝ քննության համար։ Հատ առ հատ տեսնելով գանձի բոլոր դրամները (1924 հատ) և տեղում ի հայտ եկած կոտրված կավե ամանի բեկորները, որոնք ներկայումս պահվում են թանգարանում, մենք գնահատում ենք Սյունիքի հիշյալ դրամական գանձը որպես կարևոր պատմական վկայություն Հայաստանի և հարևան երկրների համար՝ աղբյուրագիտական առումով[1]։ Այն արտացոլում է IX դարի առաջին կեսին բնորոշ Հայաստանի միջազգային կապերի ուղղությունները Միջերկրականի արևմտյան և Աֆրիկայի հյուսիսային ափերից մինչև Միջին Ասիայի արևելյան շրջանները, ինչպես նաև Պարսից ծոցի հյուսիսային կողմերից մինչև Իրանի անդրկասպյան քաղաքները։

Բազմաթիվ ու բազմատեսակ են գանձի դրամները, որոնց դասակարգումը ընձեռում է պատմական այնպիսի տվյալներ, որպիսիք անցյալներում դրամագյուտերի քննությամբ Հայաստանում չէին արձանագրվել։ Կանգ չառնելով մանրամասնությունների վրա, կարող ենք գանձի դրամները ստորաբաժանել մի քանի խմբերի ու ենթախմբերի։ Վերջիններս ցույց են տալիս Հայաստանի արտաքին առևտրական գործարքներում իշխող դրամական համակարգությունները իրենց հիմնական միավորների կշռային չափերով։ Ասենք նաև, որ գանձի դրամներից վաղագույնները հանդիսանում են Իրանի սասանյան թագավորության դրախմերը, թողարկված Կավատ, Խոսրով I, Որմիզդ IV և Խոսրով II թագավորների պատկերներով և նրանց անունների պահլավերեն գրություններով, ինչպես նաև այդ թագավորների պաշտամունքային նշաններով ու գահակալության տարեթվերի և քաղաքների անուններին վերաբերող պահլավերեն համառոտագրությունների սահմանված ձևերով[2], որոնց տվյալները ցույց են տալիս, որ ապրանքափոխանակության հա-

---

[1] *Սյունիքի դրամական գանձից հավաքված բոլոր դրամները պահվում են Հայաստանի պատմության պետական թանգարանի դրամագիտության բաժնում, № 19512։ Գանձն արձանագրված է արծաթե դրամների շարքում 46143—48042 համարների տակ։ Տե՛ս նաև թանգարանի Մայր մատյանի № 16642 հիշատակությունը։ Գանձի արծաթե դրամների ընդհանուր կշիռը, առանց քիմիապես մաքրման ենթարկելու, կազմել է չորս կիլոգրամ 920 գրամ։*

[2] Robert Göbl. Sasanian Numismatics, Klinkhardt and Biermann Braunschweig. Table XV; Michael Mitchiner. Oriental coins and their values. Vol. 11: The World Ancient and Classical World. London, 1978, p. 135—196; D. Sellwood. P. Whitting and R. Williams, London, 1985; *Խ. Ա. Մուշեղյան, Հայաստանի սասանյան դրամները, զեկուցման թեզիսներ.—1984—1985 թթ. հնագիտական աշխատանքներին նվիրված զեկուցումների թեզիսների ժողովածու. Երևան, 1985, էջ 57—59։*

մար շրջանառության մեջ են դրվել Նիհավանդ, Զերենջ, Բիշապուր, Հայաստան, Դարաբջիրդ, Նիշապուր, Ցազդ, Ջեյ, Ֆուրատ Մայսան, Ռեյ, Ամուլ, Նահր-Տիրե և շատ այլ վայրերում դրվագված արծաթե դրամները (նկ. 1)։ Հայաստանում դրվագված դրամներր դուրս են եկել Դվին քաղաքից, որը բազում թելերով կապված էր Մերձավոր և Միջին Արևելքի տնտեսական կյանքի ոլորտների հետ։ Գանձը վկայում է, որ արտաքին առևտրով Հայաստանը կապված է եղել Մարաստանի և Ֆարսի, ինչպես նաև Սակաստանի տնտեսական կենտրոնների, մասնավորապես Զերենջի հետ, որի մեջ հատված սասանյան դրախմերը մուտք են գործել հայկական շուկաները, հատկապես հարավային ու հարավ-արևելյան Իրանի տնտեսական կենտրոններից։ Մոտ չորս դրամ մաքուր արծաթի կշռային չափերով սասանյան այդ դրախմները հնուց մնացել էին առևտրի մեջ և շարունակում էին ընդունվել ապրանքների փոխանակության գործարքներում։ Այդ կշռային չափը դեռևս հին հելլենիստական ժամանակներից համընդհանուր չափ էր դարձել միջազգային առևտրում և մնացել էր որպես այդպիսին ոչ միայն Պարթևական, այլ նաև Սասանյան արքաների օրոք Իրանում ու նրան ենթակա արևելյան երկրներում, այդ թվում նաև Հայաստանում։ Վերջինիս գլխավոր քաղաք Դվինում ևս հատվում էին Սասանյան արքաների պատկերներով հիշյալ արծաթե դրամներր։ Գանձը վկայում է, որ Հայաստանից բացի, նմանատիպ դրամներն առևտրի միջոցով Սյունիք են բերվել Ֆարսի Ահվազ, Բիշապուր, Ցազդ, Նահր-Տիրե, Արտաշիր քաղաքներից, ինչպես նաև Խուժաստանից, և դրանց հոծ զանգվածում տեղ են գտել նաև Խորասանի Բալխ, Մերվ, Հերաթ, Նիշապուր և շատ այլ քաղաքներում դրվագված սասանյան դրամներր։ Սյունիքում գտնված գանձր բացառապես արծաթից թողարկած դրամներով գանձ է։ Այդպես էր ընթանում դրամական շրջանառությունը միջին դարերում համաշխարհային առումով։ Բացառություն էր կազմում Բյուզանդական կայսրությունը, որը թողարկում էր առավելապես ոսկե դրամներ։



Նկ. 1

Ողջ գանձի մոտ երկու հազարի հասնող դրամների ընդհանուր քանակությունից սասանյան դրամներր համեմատաբար քիչ են։ Դրանք պահպանվել են մոտ ինր տասնյակ օրինակներով։ Գանձի մոտ հինգ կիլոգրամի հասնող ընդհանուր քաշի նվազագույն մասը կազմում են ավելի ուշ շրջանի սասանյան դրամներր, որոնք վերջին հաշվով Հայաստանի պատմության համար նորություններ չեն։ Այդպիսի սասանյան դրամներ գտնվել են Հայաստանի հնավայրերում նաև անցյալներում, ինչպես, օրինակ, Դվինի հնագիտական պեղումներից, Շիրակի տարածքում, հիշենք Լենինականում ի հայտ եկած սասանյան ու բյուզանդական արծաթ դրամների գանձր և այլ գանձեր[3]։ Նորությունը, հնագիտական առումով, սասանյան դրամների նման, բայց արաբական տիրապետության վաղ շրջանում թողարկված պահլավերեն ու արաբերեն գրություններով դրամներն են, որոնց վրա դրոշմված են Սա-

[3] М. И. Камера, К. В. Голенко. Ленинаканский клад сасанидских и византийских монет (1956).—Византийский временник, т. XIX, 1961, с. 172—193; Х. А. Мушегян. Денежное обращение Двина по нумизматическим данным. Ереван. 1962, с. 122—138.

սանյան վերջին գահակալների, առավելապես Խոսրով II թագավորի կիսադեմ պատկերը և նրա պաշտամունքի զրադաշտական նշանները՝ բոցավառ կրակով ատրուշանը և կրակի պահպանության համար կարգված, սրերով զինված մարդկային զույգ կերպարանքները, իսկ դրանց մոտ՝ արքայի գահակալության տարեթվին ու դրամի դրվագման տեղին վերաբերող պահլավերենով տվյալները (նկ. 2)։ Ահա այդ կարգի դրամներն են, որոնք հանդիսանում են Սյունիքում գտնված դրամական գանձի տված նորությունները։ Դրանք թողարկվել են արաբական տիրակալության վաղ շրջանում, Իրանում, հատկապես նրա արևելյան նահանգներում իշխող Օմայան նահանգապետների անուններով։ Եվ այսպես, շորհիվ Սյունիքի գանձի մենք Հայաստանում առաջին անգամ տեսնում ենք Իրանի Օմայան նահանգապետներից Աբդալլահ իբն Զու-

ՀԵՂԱՆՈՑՆԵՐԻ ՊԱՀԼԱՎԵՐԵՆ ՆՇԱՆՆԵՐԸ ՍՅՈՒՆԻՔԻ ԳԱՆՁԻ (1986թ) ԱՐԾԱԹԵ VI-VIII դդ ԴՐԱՄՆԵՐԻ ՎՐԱ



Նկ. 2

բաիրի, Ումար իբն Ուբայդալլահի, Ուբայդալլահ իբն Զիյադի, Ումար իբն Միմարի, Մուքատիլ իբն Միսմայի, Ալ-Հաջջաջ իբն Յուսուֆի VII դարի վերջին՝ Ֆարսում, Խորասանում, Մարաստանում, Սակաստանում և այլ իրանական նահանգներում դրվագված արաբա-սասանյան պատկերատիպերի արծաթե դրամները։ Այդ վայրերում ևս արաբական զորքերը հաստատվել էին, և արաբական իշխանությունները, չունենալով իրենց սեփական դրամական համակարգը, թողարկում էին հնուց հայտնի Սասանյան արքաների դրամների ձևավորությամբ դրամներ, ըստ որում Սասանյանների օրոք Իրանում ընդունված կշռային չափերով՝ յուրաքանչյուր դրամական միավորի համար մոտ չորս գրամ քաշով բարձրորակ արծաթից։ Հենց այդ դրամներն էլ, որպես իրեղեն ապացույցներ հիմք են տալիս նշելու, որ արաբների տիրապետության ժամանակներում սասանյան դրամների կշռային չափերը մնում էին որպես գործող չափեր ապրանքափոխանակության ասպարեզում։ Սակայն սասանյան և արաբա-սասանյան դրամներով չեն սպառվում Սյունիքի դրամական գանձից ի հայտ եկած արևելյան դրամների շարքերը։ Կարևոր վկայություններ են ներկայացնում բուն արաբական ծագում ունեցող արծաթե դրամները, թողարկված Արաբական խալիֆայության մեջ VII դարի վերջին տարիներից սկսած։ Դրանք թողարկվեցին Օմայան խալիֆա Աբդ ալ-Մելիքի դրամական

«Հեֆորմի շնորհիվ հիջրայի 77 թ. սկսած, այսինքն մ. թ. 697—698 թթ., ըստ որում դրանց թողարկումը հարատևեց մինչև խալիֆայության բաժանումը երկու մասերի՝ արևելյան և արևմտյան։ Հետոեֆորմյան արաբական արծաթե դրամները զուրկ էին իշխանական անուններից և պատկերներից։ Դրանք թողարկվում էին բացառապես կրոնական բնույթի, Ղուրանից քաղված արաբերեն խոսքերի դրոշմով, յուրաքանչյուրի վրա նշվում էր տվյալ դիրհեմի դրվագման տարեթիվը հիջրայի տոմարով[4]։

Սասանյան թագավորության և Օմայան նահանգապետների նախառեֆորմյան, այսպես կոչված արաբ-սասանյան պատկերագրության պահլավերեն ու արաբերեն գրություններով, VI—VII դդ. դրամներից բացի, գանձում հավաքված են նաև հետոեֆորմյան բուն արաբական դրամներ, թողարկված Օմայան տիրակալության կողմից հիջրայի 80—143 թթ., այսինքն 699/700 թ. մինչև 760/761 թ.։ Դրանք ներկայացնում են ողջ Արաբական խալիֆայության տարածքի վրա գործող այդ ժամանակների նշանավոր շուկաները Աֆրիկայի հյուսիսային ափերից (մասնավորապես Թունիսից, Եգիպտոսից), Սիրիայից, Միջագետքից, Իրանի հարավ-արևմտյան շրջաններից մինչև Միջին Ասիայի երկրամասերը, ինչպես նաև Մարաստանի, Հայաստանի, Ֆարսի, Խուժաստանի, Սակաստանի (Սեջիստանի), Կերմանի, Թաբարիստանի և ապրանքափոխանակության միջնադարյան շատ այլ քաղաքները։ Հատկապես նկատելի են դառնում այդ ժամանակներում (VIII—IX դդ.) Հայաստանի հետ դրամներով անմիջականորեն կապված Սիրիայի Դամասկոս, Իրաքի Վասիթ, Բասրա քաղաքները, ինչպես նաև Եվրոպայի ծայրագույն արևմտյան շրջանի՝ Իսպանիայի Ալ-Անդալուս (Կորդովա) քաղաքից, Թունիսի, Եգիպտոսի մայրաքաղաքներից դուրս եկած դիրհեմները, որոնք նշում են կապը դրամական շրջանառության ոլորտներով հյուսիսային Միջագետքից դեպի Իրաքի ու Իրանի շրջանները, հատկապես Պարսից ծոցի առափնյա քաղաքները, մասնավորապես Խուժաստանի ու Ֆարսի շուկաները։ Այդ նույն ուղղությունների մասին, սակայն առավել լայն ընդգրկումով, վկայում են նաև խալիֆայության աբբասյան դրամները, որոնք կազմում են գանձի ավելի քան 60 տոկոսը։ Աբբասյան տիրակալության քաղաքներից լայն տարածում են ունեցել նախ և առաջ Բաղդադ մայրաքաղաքի արծաթե դրամները, որոնց վրա դրոշմված է նրա տիտղոսավոր անունը՝ բարևի կամ ողջույնի քաղաք՝ «Մեդինատ աս-Սալամ» ձևով։ Բաղդադի դրամահատարանները արծաթե դրամներ էին թողարկում զանգվածորեն՝ բավարարելու համար առևտրի պահանջները։ Նույն կշռային չափերով, նույնպես բարձր որակի արծաթից դրամներ էին թողարկվում նաև խալիֆայության այլ քաղաքներում և ինչպես ցույց են տալիս Սյունիքի գանձի աբբասյան դրամները, դրանք մտնում էին շրջանառության մեջ, դրվագված լինելով ոչ միայն Աբբասյանների մայրաքաղաքում, այլ նաև լայնածավալ Իրանի Ռեյ, Ջեյ, Ջերենջ, աշ-Շաշ, Կերման, Ահվազ, Մերվ, Սամարղանդ, Բուխարա, Սաբուր և շատ ու շատ այլ քաղաքներում, այդ թվում նաև հայոց վաճառաշահ քաղաքամայր Դվինում, որը առևտրի հինավուրց ուղիներով կապված էր Մարաստանի, Սիրիայի, Միջագետքի, Իրաքի, Պաղեստինի, Ֆարսի, Խուժաստանի, Կերմանի, Խորասանի ու շատ այլ շուկաների հետ։ Գանձի մեջ են անցել Դվինում դրվագված, Հայաստան անունը արաբական Արմինիյա ձևով նշված արծաթե դրամներից տասից ավելի դիրհեմներ, ինչպես նաև նույն Հայաստանում դրվագված ալ-Հարունիյա արաբերեն անվանումով դրամներ, որոնք հավանաբար, ինչպես բացահայտվել է դրամագիտության մեջ, թողարկվել են Վանա լճի ավազանի հայկական քաղաքներում, մասնավորապես այն քաղաքում, որը ի հիշատակ Հարուն առ-Ռաշիդի կոչվել էր ալ-Հարունիյա։ Ուշագրավ է, որ նմանօրինակ աբբասյան արծաթե դրամների վրա լրացուցիչ նշված էր նաև Հայաստան անունը Արմինիյա ձևով,

[4] Michael Mitchiner. Oriental coins and their values. Vol. I: The World of Islam. London. 1977, p. 59; Er. Schrötter. Wörterbuch der Münzkunde. Berlin, 1930, S. 145.

հավանաբար շեշտելու համար, որ տվյալ դրամահատարանը գտնվում էր Հայաստանում[5]։ Հիշենք նաև, որ Աբբասյանների տիրակալության օրոք Հայաստանում գտնվում էր նաև Մաադեն Բաջունայս քաղաքը և այդ քաղաքում դրվագված արծաթե դրամները, շրջանառության պրոցեսում պետք է որ խառնվեին Բաղդադում, Ռեյում, Բասրայում, Իսպահանում, Ահվազում, Դամասկոսում, առ-Ռաֆիկայում, Սաբուրում և բազում արևելյան, մասնավորապես սրարական, իրանական, հայկական ու միաժամանակ Միջերկրականի աֆրիկյան ափերում զարգացող քաղաքներում, հատկապես Թունիսի (Իֆրիկիյա) ու Եգիպտոսի (Միսր) և այլ առևտրի օջախներում թողարկված դրամների հետ ե սպասարկելին միջազգային առևտրի պահանջները։ Իրենց վրա ունեցած արարերեն գրություններով գանձի աբբասյան դրամները ներկայացնում են գրեթե բոլոր բնորոշ օրինակներն այն ամենից, ինչ գիտությանը հայտնի է դարձել դեռևս վաղուց, երբ Եվրոպայում տակավին առաջին քայլերն էին կատարվում քուֆիական ոճի արձանագրությունների ընթերցման գործում։ Սակայն այսպիսի մեծ քանակությամբ՝ շուրջ յոթ հարյուրից ավելի միայն աբբասյան դիրհեմների համատեղ հայտնությունը մի գանձի կազմում բացառիկ երևույթ է Հայաստանի պատմության համար։ Նկատենք, որ գանձի աբբասյան դրամներից վաղագույնն ունի հիջրայի 133 (750/751) տարեթիվը, այսինքն, երբ Աբբասյանները նոր էին հաստատել իրենց քաղաքական իշխանությունը և թողարկել էին իրենց անդրանիկ դրամական միավորները։ Այդ դրամների ընդհանուր շարքերը հաջորդաբար ներկայացնում են Աբբասյան առաջին յոթ խալիֆաների դրամների տիպային տեսակները։ Շնորհիվ Սյունիքի գանձի, Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդերում այսօր պահվում են Աբբասյան առաջին խալիֆայի՝ Աբու-լ-Աբբաս Աբդ Ալլահ աս-Սաֆֆահի գահակալության տարիներին թողարկված հազվագյուտ դրամները։ Աբբասյան դրամներն ըստ ծագման վայրերի ներկայացնում են շուրջ երեք տասնյակ քաղաքներ, ինչպիսիք են՝ Մեդինատ աս-Սալամ, ալ-Մուհամմեդիյա, ալ-Աբբասիյա, ալ-Բասրա, Իֆրիկիյա, Ջեյ, Բալխ, ալ-Քուֆա, Դեբիլ (Դվին), աշ-Շաշ, Ջերենջ, Կերման, Իսպահան, առ-Ռեյ, Սամարղանդ, առ-Ռաֆիկիյա, Դամասկոս և այնուհետև ալ-Ահվազ, աս-Սամիյա, Սուսա, Բեդաա, Սաբուր, Մերվ, Բուխարա, ալ-Հարոնիյա, Սալամիյա, Միսր, ինչպես նաև հարյուրից ավել անորոշ ու ջնջված տեղանուններով արծաթի բարձր զտության դիրհեմներ։ Դրանց մեջ են Իրաքի ալ-Քուֆա քաղաքում դրվագված վաղ ժամանակների դրամները, և նույն Իրաքի Բասրա, ինչպես նաև Խուժաստանի Սուք ալ-Ահվազ քաղաքներում հատված դիրհեմները։ Գանձը պարունակում է ալ-Մանսուր, ալ-Մահդի, ալ-Հադի, Հարուն առ-Ռաշիդ, Մուհամմեդ ալ-Ամին և ի վերջո Աբդուլլահ ալ-Մամուն խալիֆաների գահակալության տարիներին թողարկված քուֆիական ոճի արաբերեն արձանագրություններով VIII—IX դդ. արծաթե դիրհեմները։

Վերջիններիս շարքում հազիվ նշմարելի թիվ են կազմում աբբասյան խալիֆայության առաջին գահակալի դրամները։ Ընդամենը յոթ դիրհեմ, բայց նշանակալից չափով պահպանվել և մեզ են հասել Աբու Ջաֆար Աբդ Ալլահ ալ-Մանսուրի և ավելի շատ Աբու Աբդ Ալլահ Մուհամմեդ ալ-Մահդիի ու Աբու Ջաֆար Հարուն առ-Ռաշիդի դիրհեմները։ Կազմել այդ դրամների դասակարգված ցուցակները, նրանց կշռային չափերի փոփոխություններով, տիպային լրացուցիչ տվյալների ճշգրիտ արտացոլմամբ՝ հիրավի կարևոր ու պատասխանատու գործ է գիտության համար և էական նպաստ՝ հայ դրամագիտության արևելագիտական ճյուղին։ Շատ թանգարաններ չէ որ ունեն այն, ինչ ի հայտ դարձավ Սյունիքի դրամական գանձից։ Հիմա արդեն դրամագիտական վկայությունների հիման վրա առավել հստակ կպարզվեն Հայաստանի և արտաքին աշխարհի միջև զարգացող անցյալի կապերն ապրանքափոխանակության ասպարեզում Շիրակի Բագրատունյաց թագավորության ձևավորման նախօրեին։

[5] W. Anderson. Der Chalifenmünzfund von Kochtel. Dorpat, 1926, S. 20—25, № 73 (174).

Նույնքան կարևոր է դասակարգել Հայաստանում դրվագված բոլոր այն դրամները, որոնք ծագել են Սյունիքի դրամական գանձից՝ լինեն դրանք Աբբասյան խալիֆաների ու նրանց գահաժառանգների տարիների թողարկված, թե սասանյան, արաբա-սասանյան, հետռեֆորմյան օսմյան կամ արաբերեն ու պահլավերեն գրություններով դրոշմով[6]։ Ուշադիր բննության արժանի են նաև բոլոր այն դրամները, որոնք հազվագյուտ են Հայաստանում ընդհանրապես։ Այդպիսիներից ծանոթագրման ենթակա են ոչ միայն Սիրիայում, Պաղեստինում, Մարաստանում, Խորասանում և Իրաքում դրվագվածները, այլև Աֆրիկայի հյուսիսային ափերին, մասնավորապես Իդրիսյանների ու Աղլաբյանների կողմից թողարկված դիրհեմները, որոնց տիպային տվյալները հրապարակված են խիստ ամփոփ ձևով[7]։ Ողջ նյութի ժամանակագրական և դինաստիական ցուցակները հրատարակման են պատրաստվում առանձին։

Սյունիքի դրամական գանձը մեզ հնարավորություն է տալիս միատեղ տեսնելու, քննելու և իրենց բոլոր մանրամասնություններով ցուցադրելու Թարարիստանի Աբբասյան նահանգապետների՝ հազկերտյան տոմարի տարեթվերով կես դրախմանոցների շարքերը, ինչպես նաև Խալիդ իբն Բարմակ, Ումար իբն ալ-Ալա, Սայիդ իբն Դալաջ, Սուլայման, Ջարիր, Հանի, Մուքատիլ և Աբբասյան նահանգապետների ոչ քիչ թվով նաև մաշված պահլավերեն ու արաբերեն գրություններով արծաթե բարձրորակ դրամներից այնպիսի նմուշներ, որոնք հազվագյուտ են արևելագիտության եվրոպական ժողովածուներում։

Գանձի սասանյան դրամների ստորաբաժանումն ըստ նրանց ծագման կամ դրվագման վայրերի անունների*

Նիսապուր	9 դրամ	Դարարշիրդ	4 դրամ
Զևրանշ	9 »	Բալխ	3 »
Նիհավանդ	8 »	Ռեյ	2 »
Դվին	8 »	Մերվ	2 »
Բիշապուր	6 »	Հերաթ	2 »
Ջեյ	6 »	Սարուր	2 »
Ահվազ	6 »	Նա՞ր-Տիրա	1 »
Արտաշիր	5 »	Համադան	1 »
Յազդ	5 »	Ջուրջան	1 »
Մայսան	4 »	Ամուլ	1 »
		Անորոշ	4 »

Գանձի Օսմյան տիրակալության հետռեֆորմյան դրամների վրա նշված թողարկման վայրերը

Վասիթ	60 դրամ	Ջազիրա	3 դրամ
Դիմեշք	18 »	Ռեյ	2 »
Անդալուս	17 »	Սարուր	2 »
Բասրա	6 »	Մահի	2 »
Մեվ	4 »	Արտաշիր-Խուրրա	1 »
Իստախր	4 »	Տայմարա	1 »
Իֆրիկիյա	3 »	Ահվազ	1 »
		Կերման	1 »

---

[6] Р. Р. Фасмер. Два клада куфических монет.—Труды нумизматической комиссии. VI, Л., 1927, с. 29; *Խ. Ա. Մուշեղյան. Դրամական շրջանառությունը Հայաստանում. Երևան, 1983, էջ 147—157, 159—183։*

[7] Michael Mitchiner. Orientel coins and their values, Vol. II, p. 135—196.

* ՀԱՑԱՍՏԱՆ անվան պահլավերեն կրճատ ձևով նշված դրամները դրվագվել են երկրի գլխավոր քաղաքում՝ Դվինում, որին վերագրված են ԱՐ և ԱՐՄ պահլավերեն համառոտագրությամբ ուն արծաթե դրախմերը։



Այունիքի դրամական գանձից (1986 թ.) դուրս եկած դրամների հատման տեղանունները Ատրպատական Իրանի և Արարական խալիֆայության մեջ VI—IX դդ.

Կան նաև մեկական նմուշներով դիրհեմներ դրվագված՝ ՄՈՒԲԱՐԱԿ (Խվայի մոտ), ՄԱՅՍԱՆ, ԱԲՐՇԱՀՐ, ԲԱԼԽ, ԴԱՐԱԲՋԻՐԴ, ՍՈՒՐԲԱՔ (Իրաքում), ՍԱՐԱԽՍ (Խորասանում), ԱԲԲԱՍԻՅԱ (Կայրովանի մոտ), ՏԻԼԻՄՍԱՆ (=Տրիպոլի) քաղաքներում, ինչպես նաև Օմայան շրջանի ԱԴՐԲԵՋԱՆ երկրամասի անվանումով մեկ դիրհեմ։

Աբբասյան շրջանի դրամները ներկայացնում են հետևյալ կենտրոնները.

ՄԵԴԻՆԱՏ ԱՍ-ՍԱԼԱՄ	174 դրամ	ԱՀՎԱԶ	
ՄՈՒՀԱՄՄԵԴԻՅԱ	112 »	ՍԱՄԻՅԱ (Պաղեստինում)	
ԱԲԲԱՍԻՅԱ	61 »	ՍՈՒՍԱ	
ԲԱՍՐԱ	41 »	ԲԵԴԱԱ	
ԻՖՐԻԿԻՅԱ	31 »	ՍԱԲՈՒՐ	
ՋԵՑ	31 »	ՄԵՐՎ	1 դրամ
ՔՈՒՖԱ	21 »	ԲՈՒԽԱՐԱ	
ԲԱԼԽ	18 »	ՍԱԼԱՄԻՅԱ (Սիրիայում)	
ԴՎԻՆ (=Արմինիյա)	13 »	ՍԵՋԻՍՏԱՆ երկրամասի անունով	
ՄԱԴԵՆ ԲԱՋՈՒՆԱՅՍ	8 »	Անորոշ անուններով	104 դրամ
ՇԱՇ	7 »	ՋՆՋՎԱԾ »	64 »
ՋԵՐԵՆՋ	6 »		
ԿԵՐՄԱՆ	5 »		
ԻՍՊԱՀԱՆ	3 »		
ՌԵՑ	3 »		
ՍԱՄԱՐՂԱՆԴ	2 »		
ՌԱՖԻԿԻՅԱ	2 »		
ԴԻՄԵՇՔ	2 »		
ՀԱՐՈՒՆԻՅԱ	2 »		

Գանձի դրամների ճառման փողերաճոցներն ըստ նրանց աշխարհագրական դիրքի՝՝

1. ԱԲՐՇԱՀՐ հին անունը Նիսաբուր քաղաքի։ Աշխարհագրական տվյալները տե՛ս պատմական քարտեզի վրա. 36° 12′ ՀՍ, 58° 49′ Աե։ Նշված է հետոեֆորմյան դրամի վրա արաբերեն քուֆի գրելաձևով։
2. ԱՀՎԱԶ, ՖԱՐՍՈՒՄ. 31° 9′ ՀՍ, 48° 44′ Աե։ Սասանյան 6 և ԱԲԲԱՍՅԱՆ դրամների վրա։
3. ԱՄՈՒԼ, ՄԱԶԱՆԴԱՐԱՆՈՒՄ 36° 30′ ՀՍ, 52° 25′ Աե։ Սասանյան ծագում ունեցող դրամի վրա։
4. ԱՆԴԱԼՈՒՍ=ԱԼ-ԱՆԴԱԼՈՒՍ=ԿՈՐԴՈՎԱ 37° 52′ ՀՍ, 4° 50′ ԱՄ ՕՄԱՅԱՆ հետոեֆորմյան դրամների վրա։ 17։
5. ԱՐՏԱՇԻՐ, ՖԱՐՍՈՒՄ 28° 42′ ՀՍ, 52° 48′ Աե։ ՍԱՍԱՆՅԱՆ և ՕՄԱՅԱՆ ծագում ունեցող դրամների վրա։
6. ԱՐՄԻՆԻՅԱ—ՀԱՅԱՍՏԱՆ նկատի է տոնված 6—9-րդ դդ. Հայոց գլխավոր քաղաք Դվինը. քարտեզում տես՝ 38° 9′ ՀՍ, 48° 19′ Աե։ Սասանյան 8, ԱԲԲԱՍՅԱՆ 13։
7. ԱՐԴԵԲԻԼ—ՄԱՐԱՍՏԱՆ, իսկ հետագայում իրանական ԱԴՐԲԵՋԱՆԻ գլխավոր քաղաքը։ Քարտեզում տես 39° 9′ ՀՍ, 48° 19′ Աե։ Գրված Օմայան 1 դիրհեմի վրա։
8. ԱԼ-ԱԲԲԱՍԻՅԱ—քաղաք ԹՈՒՆԻՍՈՒՄ՝ ԿԱՅՐՈՎԱՆԻ մոտ։ Քարտեզում տես՝ 36° 0′ Աե, 10° 10′ Աե։ ԱԲԲԱՍՅԱՆ 61։
9. ԲԱԼԽ, ԽՈՐԱՍԱՆՈՒՄ։ 36° 47′ ՀՍ, 67° 23′ Աե։ ՍԱՍԱՆՅԱՆ 3, ՕՄԱՅԱՆ 1, ԱԲԲԱՍՅԱՆ 18 դրամների վրա։
10. ԱԼ-ԲԱՍՐԱ, ԻՐԱՔՈՒՄ։ 30° 26′ ՀՍ, 47° 56′ Աե։ ՕՄԱՅԱՆ 6, ԱԲԲԱՍՅԱՆ 41 դրամների վրա։
11. ԲԵԴԱԱ կամ ՏՈՒԴՂԱ քաղաք ՄԱՐՈԿԿՈՅՈՒՄ։ 25° 16′ ՀՍ, 50° 40′ Աե։ Տեղանունը՝ նշված աբբասյան դրամի վրա։

** Հապավումներ. Աե=ԱՐԵՎԵԼՅԱՆ
ԱՄ=ԱՐԵՎՄՏՅԱՆ
ՀՐ=ՀԱՐԱՎԱՅԻՆ
ՀՍ=ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ

12. ԲԻՇԱՊՈՒՐ, ՖԱՐՍՈՒՄ։ 30° 1′ ՀՍ, 52° 57′ Աե։ Տեղանումը՝ նշված Սասանյան դրամի վրա։
13. ԲՈՒԽԱՐԱ, ԽՈՐԱՍԱՆՈՒՄ։ 39° 48′ ՀՍ, 64°, 34′ Աե։ Նշված ԱԲԲԱՍՅԱՆ 1 դրամի վրա։
14. ԴԱՐԱԲՋԻՐԴ, ՖԱՐՍՈՒՄ։ 28° 42′ ՀՍ, 54° 9′ Աե։ ՍԱՍԱՆՅԱՆ 4 և ՕՄԱՅԱՆ 1 դրամների վրա։
15. ԴԻՄԵՇՔ—ԴԱՄԱՍԿՈՍ, ՍԻՐԻԱՅՈՒՄ 33° 34′ ՀՍ, 36° 20′ Աե։ ՕՄԱՅԱՆ 18, ԱԲԲԱՍՅԱՆ դրամների վրա։
16. ՋԵՐԵՆՋ, գլխավոր քաղաքը ՍԱԿԱՍՏԱՆՈՒՄ 31° 33′ ՀՍ, 61° 38′ Աե։ ՍԱՍԱՆՅԱՆ 9, ԱԲԲԱՍՅԱՆ 6 դրամների վրա։
17. ԻՍՊԱՀԱՆ, քաղաք ՄԱՐԱՍՏԱՆՈՒՄ, 32° 42′ ՀՍ, 51° 43′ Աե։ ԱԲԲԱՍՅԱՆ 3 դրամների վրա։
18. ԻՍՏԱԽՐ, ՖԱՐՍՈՒՄ=հին ՊԵՐՍԵՊՈԼԻՍԸ 30° 1′ ՀՍ, 52° 57′ Աե։ ՕՄԱՅԱՆ 4 դրամների վրա։
19. ԻՖՐԻԿԻՅԱ ԹՈՒՆԻՍՈՒՄ։ 36° 48′ ՀՍ, 10° 10′ Աե։ ՕՄԱՅԱՆ 3, ԱԲԲԱՍՅԱՆ 31 դրամների վրա։
20. ԿԵՐՄԱՆ 30° 25′ ՀՍ, 57° 2′ Աե։ ՕՄԱՅԱՆ 1, ԱԲԲԱՍՅԱՆ 5։
21. ՀԱՄԱԴԱՆ, ՄԱՐԱՍՏԱՆՈՒՄ 34° 48′ ՀՍ, 48° 30′ Աե, ԱԲԲԱՍՅԱՆ 1։
22. ՀԱՐՈՒՆԻՅԱ, ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎԱՆԱ լճի ավազանում, ԱԲԲԱՍՅԱՆ 2։
23. ՀԵՐԱԹ ԽՈՐԱՍԱՆՈՒՄ, 34° 29′ ՀՍ, 62° 8′ Աե։ ՍԱՍԱՆՅԱՆ 2։
24. ՄԱԱՏԵՆ ԲԱՋՈՒՆԱՅՍ, ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՎԱՆԱ լճի ավազանում. 38° 18′ ՀՍ, 39° 34′ Աե ԱԲԲԱՍՅԱՆ 8։
25. ՄԱՅՍԱՆ, ԽՈՒԺԱՍՏԱՆՈՒՄ, 31° 20′ ՀՍ, 47° 20′ Աե։ ՍԱՍԱՆՅԱՆ 4, ՕՄԱՅԱՆ 4։
26. ՄԵՐՎ, ԽՈՐԱՍԱՆՈՒՄ, 37° 30′ ՀՍ, 62° 10′ Աե։ ՍԱՍԱՆՅԱՆ 2, ՕՄԱՅԱՆ 4, ԱԲԲԱՍՅԱՆ 1։
27. ՄԱՀԻ, ԽՈՐԱՍԱՆՈՒՄ, ՄԵՐՎԻ մոտ։ ՕՄԱՅԱՆ 2։
28. ՄԵԴԻՆԱՏ ԱՍ-ՍԱԼԱՄ—ԲԱՂԴԱՏ Տես՝ 33° 22′ ՀՍ, 44° 26′ Աե։ ԱԲԲԱՍՅԱՆ 174։
29. ՄԻՍՐ=ՄԻՍՐ ԱԼ-ՖՈՒՍՏԱՏ=ԵԳԻՊՏՈՍԻ հին մայրաքաղաքը ԱԲԲԱՍՅԱՆ 1։
30. ՄՈՒԲԱՐԱԿ, գյուղ ԽԻՎԱՅԻ մոտ 41° 55′ ՀՍ, 60° 5′ Աե։ ԱԲԲԱՍՅԱՆ 1։
31. ԱԼ-ՄՈՒՀԱՄՄԵԴԻՅԱ, ՄԱՐԱՍՏԱՆՈՒՄ 30° 0′ ՀՍ, 51° 30′ Աե։ ԱԲԲԱՍՅԱՆ 112 դրամների վրա։
32. ՅԱԶԴ, ՖԱՐՍՈՒՄ, 32° 3′ ՀՍ, 54°, 47′ Աե։ ԱԲԲԱՍՅԱՆ 5։
33. ՆԱՀՐ—ՏԻՐԱ, ՖԱՐՍՈՒՄ կամ ԽՈՒԺԱՍՏԱՆՈՒՄ ԱՀՎԱԶԻ մոտ 31° 9′ ՀՍ, 48° 44′ Աե։ ՍԱՍԱՆՅԱՆ 1։
34. ՆԻՀԱՎԱՆԴ, ՄԱՐԱՍՏԱՆՈՒՄ, 34° 5′ ՀՍ, 48 29 Աե։ ՍԱՍԱՆՅԱՆ 8։
35. ՆԻՍԱՊՈՒՐ, ԽՈՐԱՍԱՆՈՒՄ 36° 12′ ՀՍ, 58° 49′ Աե, ՍԱՍԱՆՅԱՆ 9։
36. ԱՇ-ՇԱՇ, ԽՈՐԱՍԱՆՈՒՄ 42° 4′ ՀՍ, 68° 11′ Աե։ ԱԲԲԱՍՅԱՆ 7։
37. ՋԱԶԻՐԱ—ՀՍ ՄԻՋԱԳԵՏՔ 37° 15′ ՀՍ, 42° 14′ Աե։ ՕՄԱՅԱՆ 3, ԱԲԲԱՍՅԱՆ 6։
38. ՋԵՅ, ՄԱՐԱՍՏԱՆՈՒՄ, ԻՍՊԱՀԱՆԻ մոտ. 32° 42′ ՀՍ, 51° 43′ Աե։ ԱԲԲԱՍՅԱՆ 31։
39. ՋՈՒՐՋԱՆ, ՄԱԶԱՆԴԱՐԱՆՈՒՄ. 37° 12′ ՀՍ, 54° 52′ Աե։ ՍԱՍԱՆՅԱՆ 1։
40. ՌԱՖԻԿԻՅԱ ՄԻՋԱԳԵՏՔՈՒՄ ՀՍ 36° 0′ ՀՍ, 39° 20′ Աե։ ԱԲԲԱՍՅԱՆ 2։
41. ՌԵՅ, ՄԱՐԱՍՏԱՆՈՒՄ, 36° 0′ ՀՍ, 51° 30′ Աե։ ՍԱՍԱՆՅԱՆ 2, ՕՄԱՅԱՆ 2, ԱԲԲԱՍՅԱՆ 3։
42. ՍԱԼԱՄԻՅԱ, ՍԻՐԻԱՅՈՒՄ. 35° 6′ ՀՍ, 36° 59′ Աե։ ԱԲԲԱՍՅԱՆ 1։
43. ՍԱԲՈՒՐ, ՖԱՐՍՈՒՄ. 29° 50′ ՀՍ, 51°, 55′ Աե։ ՍԱՍԱՆՅԱՆ 2, ՕՄԱՅԱՆ 2, ԱԲԲԱՍՅԱՆ 1։
44. ՍԱՄԱՐՎԱՆԴ, ԽՈՐԱՍԱՆ ՀՍ. 40° 0′ ՀՍ, 67° 40′ Աե։ ԱԲԲԱՍՅԱՆ 2։
45. ՍԱՄԻՅԱ, ՊԱՂԵՍՏԻՆՈՒՄ 31° 58′ ՀՍ, 35° 23′ Աե։ ԱԲԲԱՍՅԱՆ 1։
46. ՍԱՐԱԽՍ, ԽՈՐԱՍԱՆՈՒՄ, 36° 38′ ՀՍ, 61° 13′ Աե։ ՕՄԱՅԱՆ 1։
47. ՍԵՋԻՍՏԱՆ—ՋԵՐԵՆՋ մայրաքաղաքը հիշյալ նահանգի ՍԱԿԱՍՏԱՆՈՒՄ։ 31° 33′ ՀՍ, 61° 38′ Աե. 31° 0′ ՀՍ, 62° 20′ Աե։ ԱԲԲԱՍՅԱՆ 1։
48. ՍՈՒՍԱ, ԽՈՒԺԱՍՏԱՆՈՒՄ. 31° 55′ ՀՍ, 48° 24′ Աե։ ԱԲԲԱՍՅԱՆ 1։
49. ՍՈՒՐԲԱՔ, ԻՐԱՔՈՒՄ. 31° 8′ ՀՍ, 47° 36′ Աե։ ՕՄԱՅԱՆ 1։
50. ՎԱՍԻԹ, ԻՐԱՔՈՒՄ 31° 51′ ՀՍ, 46° 7′ Աե։ ՕՄԱՅԱՆ 60։
51. ԱՏ-ՏԱՅՄԱՐԱՆ, ԻՍՊԱՀԱՆԻ մոտ, կորդինատները չեն տրված ՕՄԱՅԱՆ 1, ՇՈՒՔ-ԱՏ-ՏԱՅՄԱՐԱՀ։
52. ՔՈՒՖԱ, ԱԼ-ՔՈՒՖԱ. ԻՐԱՔՈՒՄ 32° 3′ ՀՍ, 44° 37′ Աե։ ԱԲԲԱՍՅԱՆ 21։
53. ՍԵԲԻՆԻՔ—ՍԻՍԻԱՆ, ՀԽՍՀ. 46° 30′ Աե։ 39° 30′ ՀՍ։

МОНЕТНЫЙ КЛАД ИЗ СЮНИКА

Доктор ист. наук Х. А. МУШЕГЯН

Резюме

В статье представляются основополагающие данные состава монетного клада, найденного при благоустройстве земельного участка жителя г. Сисиана Сисианского района Армянской ССР О. А. Казаряна. Клад был обнаружен случайно в апреле 1986 г. в глиняном кувшине, обломки которого подлежат реставрации. На участке оказалось около двух тысяч восточных монет исключительно из серебра высокого качества, выпущенных в VI—IX вв. По происхождению эти монеты распределяются на следующие категории: а) денежные единицы—драхмы последних царей сасанидского Ирана; б) арабо-сасанидские монеты Омайадов дореформенного периода с пехлевийскими и арабскими надписями; в) монеты—полудрахмы аббасидских наместников Табаристана VIII в.; г). послереформенные омайадские монеты—дирхемы VIII в. без имен правителей, исключительно с куфическими надписями исламского значения; д) аббасидские монеты Восточного халифата VIII—IX вв. с характерными для них хронологическими и географическими данными; е) неопределенные дирхемы со стертыми куфическими надписями VIII—IX вв., которые находятся в процессе определения. Это содержательный монетный клад Армении, наиболее полно отражающий состав денежного обращения страны и главные направления ее внешних связей начала IX в.